Թարթառն ազատվում է սառցե կապանքներից:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ԱՆՆԱ ՊԱԼԱԳԻՆԱ

Նա գրողների միություն էր եկել մեծ «ավարով»: Պայուսակը պոնկեսրունկ լիքը էր բրդյա բաճկոններով, գուլպաներով, ձեռնոցներով... Հանձնելով Արցախի ինքնապաշտպանության մարտիկների համար գործած ձմեռային հագուստը, նա նորից թել խնդրեց:

— Այդքանը մենա՞կ ես գործել, Աննա,— իր հիացմունքը չթաքցրեց պատասխանատու ընդունողը:

— Ինչո՞ւ մենակ,— քաղցր հայերենով պատասխանեց շիկահեր այցելուն,— իմ հարևանները օգնել, իմ ծանոթները օգնել: Ռուս կինը ցուցադրաբար վեր պարզեց բաճկոններից ամենագեղեցիկը, ավելացնելով, որ այն 2—3 օրում գործել է Ջ. Հակոբյանը՝ իր հարևանուհին:

Մշտազբաղ կին է Աննա Պալագինան՝ Երևանի ռուսական ուղղափառ եկեղեցու երեցփոխի տեղակալը: Մի քանի օր առաջ նրան հանդիպեցի հիվանդանոցում: Եկել էր Արցախից տեղափոխված վիրավոր ֆիդայիներին տեսակցության, հետը բերելով դրամ և եկեղեցու հանգանակությամբ գնված մեկական կոստյում: Բժիշկները պատմեցին, որ այդ կինը հաճախ է այցելում վիրավորներին, խնամում նրանց, օգնում՝ ինչով կարող է: Քանի անգամ գիշերներ է նա լուսացրել նաև հարավսլավցի այն օդաչուների սնարի մոտ, ովքեր լուրջ վնասվածք էին ստացել Երևան թռոներ տեղափոխելիս: Ահա թե Պալագինային հասցեագրված նամակում ինչ են գրում նրանք իրենց հայրենիքից.

«Թանկագին Աննա Դմիտրևնա, հավերժ երախտապարտ ենք ձեզ մեր հանդեպ ցուցաբերած մարդկային վերաբերմունքի ու հոգատարության համար: Հայաստանից մենք տարանք ձեր շուայլ հոգու մի մասնիկը: Շնորհակալություն»: Մեզ մնում է նույնպես շնորհակալություն առել Արցախի ցավով խորապես ապրող այդ ռուս կնոջը՝ որի հարկի տակ հայեցի դաստիարակություն են ստացել երկու զավակ:

Եղենա ԱԿՈՊՈՎԱ